



ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Կը Հրատարակուի Շաբաթը մի Անգամ

ԲԱԺԱՆՈՐԴԱԿԻՆ

Պուլկարիոյ համար տարեկան	10 ֆր
» » վեցամսեայ	5 »
Արտասահմանի համար տարեկ.	12 »
» » վեցամսեայ	6 »

Վ. ՋԱՐՄԱՆԻՔ ԿԱՆԻՍԻԿ

Նամակ, ծրար եւ այլ քաղաքի քաղաքի հետեւեալ հասցեով
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՉԱՔՐԵԱՆ

Տէր և Խոյնդիր Տաւրու շաբաթաթերթի

Х. Чанжрия
Реданторъ на вѣстникъ
„ДАВРОСЪ“
Варна България
Отговорникъ Н. Драгулевъ

H. TCHAKERIAN
Rédacteur du Journal
DAVROS
Varna (Bulgarie).

ՊԱՅՄԱՆՔ

Խմբագրութեան եկամբ գրութիւնք կը
հրատարակուին մասամբ կամ ամբողջա-
թեամբ : Հրատարակուած ու չը հրատա-
րակուած ձեռագիրներ ետ չեն տրուիր :
Ծանուցման տողը 20 սնթ. : Երեքէն
աւելի անգամներու համար գատ սակար-
կութիւն : Ծանուցմունք կ'ընդունուին
ամէն լեզուաւ :

Ա. ՏԱՐԻ

ԵՐԵՎԱՆԻ 19 ՄԱՅԻՍ 1898

Թիի 14

ԶԻԿԶԱԿՆԵՐԸ

Մեր «Շաբաթ»-ի հետ ունեցած
խնդիրը դատի յանձնելէ բաւական
ժամանակ յետոյ՝ իրիկուն մը ուշ
տեն մեզ կը ներկայանայ Տ. Օրնիկ
Գայազաւէ և տեսակցութիւն մը
կը խնդրէ . այդ տեսակցութեան
մէջ կ'ուզէ համոզել զմեզ թէ երբեք
մասնակցութիւն ունեցած չէ հոշա-
կաւոր մեքենայութեան մէջ , զոր
դատապարտելի կը գտնէ ինքն ալ
ի մէջ այլոց խօսքը կը դառնայ Պուլ-
կարական օրինաց այն տրամադրու-
թեան վրայ որ գրողին բացարձակ
ազատութիւն կուտայ , ուստի եւ
շատ արգահատելի կը գտնէ «Շաբ-
աթ»-ի պատասխանատւին՝ Տիար
Թահմիզեանի կացութիւնը և անոր
կրեւիք պատժին վրայ ցաւ կը
յայտնէ :

Մենք առաջին օրէն իսկ կը փա-
փաքէինք Թահմիզեանէն աւելի նոյն
իսկ «Շաբաթ»-ի անանուն և ան-
ստորագիր հայհոյիչները պատժել
տալ , գէթ բարոյապէս խայտառա-
կելով զիրենք աշխարհի առջեւ ,
քանի որ օրէնքն այս պարագայիս
գրողներուն զօրավիզն եղած է եւ
հետեւաբար դժուարացուցած զի-
րենք նիւթական պատժի մը ենթար-
կելը : Ուստի երբ Տիար Թահմիզե-
անի նկատմամբ մեր խօսակցին
բերանէն արգահատանաց բառեր
կը թռնէ , յարմար կը սեպենք —
և այն նոյն ինքն Տիար Թահմիզեանի
օրեր առաջ ըրած խնդիրքներէն
գրգռուած — անմիջապէս Գայազա-
ւէի ազնուութեան կոչում ընելով ,
ինչոքե՞ր որ ընդունի իրեն յանձնե-
լիք պաշտօնս իր մտերիներուն՝
Շաբաթամականներուն մօտ էլ կ'ըն-
դունի :

Երկու միջոց կ'առաջարկեմ : Ա-
ռաջին . հրապարակային դատաս-
տան մը հետեւեալ պայմաններու
տակ : Իմ և «Շաբաթ»-ի հերոսնե-
րուն ներկայութեան կանչել ժողո-
ւուրդը եկեղեցւոյ բակը և հոն մի-
ջոց տալ Պարոն Շաբաթամականնե-

րուն երեք ժամ շարունակ խօսելու
որ կարենան ապացուցանել իմ վրայ
դաւաճանութեան ամենախորթիկ
դէպք մը . այս պարագային մէջ
ժողովուրդը արտօնուած լինի կտոր
կտոր ընելու զիս նոյն իսկ գտնուած
տեղս , իսկ հակառակ պարագային՝
իբր ցած զրպարտիչներ , սիրայօժար
ընդունին ժողովուրդին թուրք ի-
րենց ճանմակ թէ սեւ երեսնուն վրայ

Երկրորդ . իսկ եթէ կը խրաչին
այս հրապարակային դատաստանէն ,
ինչ որ շատ հաւանական է քաջա-
մարտիչ Շաբաթամականներուն
համար , ընդունին պատուոյ դատաս-
տան մը կազմուած նոյն իսկ իրենց
համակիր անձերէ , որ պաշտօն ու-
նենայ քննելու և որոշ վճիռ մը ար-
ձակելու : «Ճշգրտութեան դատարան»
է և կամ Շաբաթամականներ գար-
շելի տեսակէն զրպարտիչներ են» :
Ու մենք հրատարակելով արտասահ-
մանի բոլոր հայ թերթերուն մէջ
այդ վճիռը , պարտաւոր լինինք ա-
ռանց առարկութեան համակերպիլ
անոր և անոր բոլոր հետեւանքնե-
րուն :

Տիար Օրնիկ այս երկու միջոցներն
ալ բանաւոր , վեհանձնական ու մի-
եւեռնոյն ատեն Շաբաթամականներուն
ալ շատ նպաստաւոր գտնելով , սի-
րայօժար կ'ընդունի և կը խոստա-
նայ իրենց հետ տեսակցելով , ժամը
7ին պատասխանը բերել մեր տունը ,
զոր ցոյց կուտամ :

Ճշտութեամբ ի զո՛ւր կ'սպա-
սեմ մինչեւ ժամը 12, մեր խաւարի
հերոսներուն պատասխանին : Եկող
գացող չը կայ :

Միւս օրը չեմ տեսներ ու ելլօրը
հետ լուր կը զրկեմ իր առած խոս-
տումը յիշեցնելով : Վասնի մը օր
յետոյ կը հանդիպիմ իրեն պարտե-
զին մէջը ու ստիպողաբար կը պա-
հանջեմ իր բանակցութեան ար-
դիւնքը : Կ'ըսէ թէ պատուոյ դա-
տաստանը պիտի ընդունին , միայն
թէ անգամ մ'ալ տեսնուիմ իրենց
հետ ու այս գիշեր լուր բերեմ ձեր
տունը ժամ 7ին :

Միեւեռնոյն ծիծաղելի կատակեր-
գութիւնը . մինչեւ ժամ 12 եկող
գացող չը կայ :

Մէկ երկու օր դարձեալ չեմ տես-
ներ , ու ես այս անգամ դիտմամբ
ժամանակ կուտամ իրենց , սուտ թէ
իրաւ լած ըլլալով թէ ասանկ պա-
րագաներու մէջ Մօսպլանի բար-
ձունքէն կ'սպասեն եղբի իրենց հը-
րահանգը վերջապէս օր մը
նորէն ձեռք կը ձգեմ մեր Պ. պատ-
գամաւորը պարտեզին քովը և քիչ
մը ծանրկեկ բառերով կը պահան-
ջեմ պատասխանը : Խեղճն Գ. ինչ ը-
ներ , քանի որ ձգձգումը իր կամ-
քին հակառակ տեղի կ'ունենար
Շաբաթամականներէն , որոնք կ'ըսէ
վերջնականապէս կ'ընդունին չեզոք
ու պարկեշտ անձերէ կազմուած
պատուոյ դատաստանը , պայմանաւ ,
որ գրաւոր առաջարկէք զայն :

Շատ լաւ կ'ըսեմ ու հետեւեալը
կը գրեմ ,

Վառնա, 8/20 ապրիլ 98

Ա. Պարոնայս ,

2. Թահմիզեան , Գամբը Արշաւի ,
և Շաւարշ :

Պարոններ ,

«Շաբաթ»-ի 14րդ թուին մէջ
իմ անձը իբր դաւաճան և իմ գը-
րութիւնը՝ իբր ազգադաւ դատա-
պարտել ուզողները յանձնած եմ
արդարաւորեան ճանկը :

Կառավարութեան առջեւ իմ
զրպարտիչներուն խայտառակուե-
լուն վտահ կարգ մը իրողութեանց
երեւան գալէն և այսպէսով գուցէ
անմեղներ (*) պատժել տալու հար-
կին մեր վրայ ծանրանալէն զգու-
շանալու համար , թողլով , որ դա-

(*) «Միւրա»-ն որուն համար կ'ըսուի
թէ 10—15 հրկար օրեր աշխատուած
է համոզելու , որ հրատարակէ միամը-
տօրէն այդ երկու պուլկարներէն գրեթե
եւ 2. Թահմիզեան , որուն համար ալ
կ'ըսուի թէ բնաւ մասնակցութիւն ու-
նեցած չէ ծանուցեալ զրպարտագրի
խմբագրութեան մէջ :

աւարանը իր օրինական ձեւակեր-
պութեանց հետամտի , ես կուգամ
այս գրով առաջարկել Ձեզ պարոն-
ներ , պատուոյ դատաստան մը , որ
քննէ «Շաբաթ»-ի այդ ծանր ամ-
բաստանութիւնը :

Այդ պատուոյ դատաստանի պայ-
մանները պէտք է լինին :

1.—Անկեղծ ու պարկեշտ 5 մար-
դիկներ , որոնք նշանակուելու են
երկու կողմին համաձայնութեամբ :

2.—Օրն ու ժամը որոշուած ա-
ստեն՝ ինք պատուոյ ատենը կարող
է ուզածին չափ ունկնդիրներ ըն-
դունելու , ուր մենք սակայն պար-
տաւոր ենք պատրաստ գտնուելու
անհրաժեշտաբար :

3.—Երկու կողմն ալ պարտաւոր
է առանց առարկութեան ընդունե-
լու դատարանին վճիռը , ինչ որ ալ
լինի :

4.—Այս հրաւեր և իր պատաս-
խանագիրը , զոր պարտիք գրաւո-
րապէս տալու , նոյնպէս և դատա-
րանին վճիռը պէտք է հրատարակ-
ուին ամեն թերթերու մէջ անխրո-
րաբար , մասնաւորապէս «Տաւրու»-ի
և «Շաբաթ»-ի մէջ :

Այս պայմաններու տակ նախա-
պէս առաջարկուած և զաքարիա-
կանութեամբ պատասխանուած պատ-
ուոյ դատաստանի այս գրաւոր հրա-
ւերին պատասխան մը կ'սպասեմ
նոյն իսկ 8 տարեկան տղէ մը . ո՛ւր
կը մնայ այն պարոններէն , որոնք
Արամազդներն իսկ հեգնելու չափ
խոշոր կը գտնեն ինքզինքնին :

Տ. ՃԳՆԱՒՈՐԵԱՆ

Այս անգամ մեր պատգամաւորին
ընկեր կուտանք ուրիշ յարգելի
անձնաւորութիւն մ'ալ՝ Տիար Զա-
րեհ Պէշիբեան , որ երթան միատեղ
յանձնեն թուղթս և ստանան ի-
րենցմէ ալ ընդունելութեան գիր
մը , որ կարող լինինք որոշ հիման
մը վրայ բանակցիլ և կազմել պատ-
ուոյ ատենը օր առաջ :

Յուսալից գիշեր մը կ'անցունեմ
այն մոտածուով թէ՛ վերջապէս պի-
տի կրնամ առանց սպասելու դա-

տարանական գործողութեանց երկուր ու բարակ ձգձգումներուն — քանի որ «Շարժում» Սօֆիա զբոսկում էր թարգմանութեան համար և ո՞րքա՞ն, ո՞րչափ աստեղէն պիտի հասնէր հոս ընդհ. դատարանին ձեռք — պատույն ատենին մէջ մարքեւ հաշիւս ժամ առաջ և պատուելով զիրենք ծածկող սեւ շղարշը ցոյց տալ հանրութեան — ապուշը՝ աճարարին, կարճը երկանին հետ — խառնակ ընկերութեան մը բարոյական մեծ անանկութիւնը :

Պարսպ յոյս . . . եկան ըսելու թէ չեն ընդունիր ու կտրիճներու պէս փախուտ կուտան . այո՛, կը փախին ասպետական ճեղքընճեղքէն :

Տ. Թահմիզեան՝ գիտակից անցած ու գործածին, վերին աստիճանի յազարած շունչը մեր քով կ'առնէ ու կ'սկսի կծու շեշտերով իր զայրոյթն յայտնել իր վտանգութիւնը չարաչար գործածած ըլլալուն զէմ : Կ'ըսենք, գաղտնի իրենց ընէք, զի օրինաց սահմանին մէջ — եթէ կտրելի է — ստանց զիրենք մեր ձեռքը տալու, չենք կտրուլ ձգել ձեր օձիքը, ինչպէս կառնութիւն յայտարարած ենք «Տաւրոս»ի մէջ, եթէ դուք մինչեւ իսկ մեր գաւակն եղած ըլլաք :

Խեղճ Թահմիզեան կ'երթայ ու կուգայ ձիգ օրեր առանց ելքի, կռնակ կը դարձունեն քաջալանջ մենամարտիկները . շողենաւային զիկզկութեամբ միշտ չեղ ու քովին կը ցցնեն իրենց գէմը և այդ գնացքին մէջ կը գտնեն իրենց բարձր ազգագիտական հմտութիւնը . . . խեղճ աղաք :

Վերջապէս օր մ'ալ քիչ մը խաղնելով և քիչ մ'ալ նեղը մնացած ըլլալով Թահմիզեանի ստիպումներէն, Պ. Շարժումականներ կ'ընեն կ'ըսեն թէ՛ մենք «Շարժում»ի այդ գրութեան մեր ձեռքով կը գրենք նոյնութեամբ, կ'արագորենք ու կուտանք, եթէ կ'ընդունի Ճգնաւորեան այդ կերպով ձեր օձիքը թողուլ և մեզ գէմ գոտ բռնալ :

Այդ ստորագրութեամբ թուղթը մեր ձեռքն եղած ատեն, մտածելով թէ կարող պիտի լինինք զիրենք անմիջապէս ընդհ. դատարանին յանձնել իրենց այդ գրութեամբ մէկտեղ, սիրայօժար կ'ընդունինք Տ. Թահմիզեանի այդ առաջարկը՝ արդիւնք իւր մէքիքական երկարատեւ երթիւնէ կին :

Պատասխանը ուղայ մը խաբելու ստիպումեւ բաւերու կոյտ մը — թէ մեզ չեն տար եղեր այդ թուղթը եւնա — և փախուտ . . . փախուտ, միշտ փախուտ :

Է՛հ, պարտնեք, յու էր ձեր ընթացքը ձեր առաջին քայլերուն մէջ, չեղճարարը ըսիք ու շատ շատ մեղայագիր մը ստորագրեցիք . ո՞վ ըսեց ձեր այդ զիջողական նախաձեռն, մոռցուեցաւ, գնաց : «Յարգին տակէն» ըսիք, ու Արիս Գուր-

(*) Օրէնք է, որ ազգագրիկն կը կցուի նաեւ չափաւոր եղող թուղթը :

պէթեանի ջախջախիչ պատասխանովը շատ շատ դուք մտաք յարգին տակը . ո՞վ զգաց ձեր այդ արգաստեղի կայութիւնը, քանի որ «Երաւունք»ի յարգելի խմբագրապետը իր միջիջ չափազանցուած ազնուութեամբ — չըսենք թուրութեամբ — չըհաճեցաւ պէտք եղած թափով ցուցներու և խոյտաւակելու իսկապէս յարգին տակ սողացողները . ան ալ մոռցուեցաւ, գնաց :

Եթէ մնայիք ձեր այդ անհարկի արշաւանքներուն մէջ և կօշիկէն վեր չ'ընէք, յիմար կտառաւորութեամբ մը, աւելի երկար պիտի բաշքէիք բոլոր . . . , զոր յանձնած են ձեզ «քննչ մեզ տէկները» : «Հայ դաւաճան»ը սակայն երբեք չը պիտի մոռցուի և իրեն հետ չը պիտի մոռցուին նաեւ «կեղծարարը ու Յարգին տակէն»ը գէթ մեր կողմանէ, որոյնով կը խոտանանք մտաւարագէտ զբաղուիլ աւելի մանրամասնութեամբ :

Որչափ ալ զիկզկորէն քալէք, ուր և ո՞ր նաւահանգիստն ալ ելլալ ուզէք, սպասեցէք վտանգօրէն ձեր այս հաշակաւոր էրեքին, ձեզ համար պատրաստած անմահութեան դափնիներուն :

Տեղեւոր ինն :
ՏԻԳՐԱՆ ԶԳՆԱՒՈՐԵԱՆ

Վառնա, 14 Մայիս 1898

Տէր Խմբագիր,
Ձեր մայիս 12 թուակիր թերթին մէջ իմ մասին, իւր թէ եղբայրս մէջ ձեռքով մըրտութիւն եմ ըրած, զոր երբեք չեմ ընդունիր այդ զրպարտութիւններ, եւ միանգամայն Աթինայէն խոչը գուժար մը առնելով մատրան համար առած փախած եմ, որքան անհաւատալի, յիշուի, Աթինա կեցայ ամիս մը և մատրան մը բացուելուն ժողովրդեան փափաքանօք հանգամանակութիւն մը եւ զաւ, սակայն ազգային ժողովուրդը, շատ փոքրիկ գումար մը գոյացաւ, այսինքն 150 դահականի չափ, զոր հանգամանակութեան տեղը ի հարկին քովս է կը ցուցնեմ : Անկարելի եղաւ մատրան բացուելը այդպիսի սուղ երկրի մը մէջ, ըսածներս Աթինա կեցող մը կ'ընայ հասկնալ :

Ուստի հաճեցէք հերքել Ձեր լուրջ թերթին մէջ, այսպիսի անտոյգ լուրերուն կարեւորութիւն չտալով :

Որով մնամ Ձերդ Աղօթարար
ԳԵՈՐԳ ԲԷԶ ԷԻՐԻՄԻՅԵԱՆ

Մօտերու Վառնայի Պատ. Թաղ. Խորհրդից որոշմամբ պաշտօնէ դադարեալ Հիւրթիւղեան Գէորգ քահանայն վերոյդրեւելը զրկած է, ոյն որ յանուն անկողմնակալութեան կը հրատարակեմք նոյնութեամբ «Տաւրոս»ի մէջ :

Տէր հայրը՝ ինչպէս կը տեսնուի, շատ ուշ մնացած է իր հերքումը տալու, զի «ձեռք և հանգամանակութեան» մասին շատ առաջ գրած էր «Հայիկ» շաբաթաթերթը, ու ինքը իր լուրսիւնով, հաստատած կը լինէր թէ՛ զրպարտութիւն մը չէր այլ իրողութեան պէս բան մը :

Տէր պապանի, Ձեր պաշտօնը եւ կատարելիքը դերը շատ մեծ է, շատ բարձր է, բայց հազար ամիսս, որ Ձեր մէջ նորա վնասութիւնը, նուիրականութիւնը ճանչցողներ շատ քիչ կը զբոսնուին, եւ եղածներն ալ մատով կը համբուին :

ԿԼԱՏԱԹՕՆ

Մեծ անգլիային, մեծ մարդը, մեծ մարդասպանին մեծագոյն ամբաստանիչը մեռաւ :

Ազատութեան և ճշունած ազգերու ազատագրութեան միակ նախաւարը՝ այլ ևս չկայ, սակայն իւր յիշատակները կան ու պիտի մնան, և մարդկութիւնը չը պիտի մոռնայ Զինթի :

Հայ ազգը ու հայ ժողովուրդն ալ յատկացութեան պարտք մը կը դրուէ, որուն թարգմանը կուգէ ըլլալ «Տաւրոս» :

Կը մտնենք մարդկութեան մեծ բարեկամին հանդիստ ու անթարշաժ պսակ երկնից արքայութեան մէջ, միթիթարութիւն և արտիստը իւր զուգակից Տիկին կրտսերութիւն և իւր զուգակից :

ՇԱՐԺՈՒՄ

ԵՒ ԻՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

Չարքեանի և իր գաղափարակցաց զիտողութիւններն ու քննադատութիւններն անտեղի չեն, սակայն գծադրաբար ինքնաճանաչութեան և քննադատութեան օգին ժողովրդեան մէջ բռնած չէր դեռ, ժողովուրդը բաղձացեալ բարեբաստիկ և մօտիկ ապագայի մը երազով օրօրուած՝ հայրենասիրական խանդավառութենէ արթնաւ, անգղապաշտ կը հետեւէր զինքը քշող սանող ճակատագրական հոսանքին, և մեր անշլթահայեաց և խեղճ անընդունակ գործիչներու ճարպիկ շահագործումները ժողովրդեան այս արատաւոր ոգեվառութեան արգիւններն էին :

Տրանսակ մը տարիներու ընթացքում տեղի ունեցած իրողութիւնները վերջապէս ժողովուրդը սթափեցուցին իր խոր թմրութենէն, անտարբեր տկանութեան ինքի վրայ անդրադարձող քննադատ մը եղաւ, ինքնաճանաչութեան ոգին արմատացաւ, և վերջապէս գաղափարի յովիտութիւնն ապահովուեցաւ : Այդ ժողովրդական շարժման պէտք էր գարկ տալ, և ահա՛ կրկին ազատութեան անյողող Զէյթունցին հրապալակ նետուեցաւ և սկսաւ մասնանիշ ընել ու քննադատել յեղափոխական սխալ քայլերն ու շարժումները, ճիշդ ա՛յն տեղայն վրայ ուր անտարձ և հոստոյն յեղափոխականներ, որածութենէ մազապուր զերծած հայութեան մէկ մասին արիւնշաղթաւ բեկորներով, իրենց կուռքը կանգնեցնել կ'ուզէին : Չարքեանի այս ընթացքն ինչպէս յանցելու մն զարդիս եւս իր գէմ՝ յարցոյց կարգ մը չարամիտ դաւադիրներ, որք հայրենասիրութեան զիմակին տակ, սպառնացին նոյն իսկ անոր կեանքին զէմ : Խորհեալ, խօսելու և գրելու բնատուր անբռնաբարելի իրտանց պաշտպան

կանգնած կեղծ կուսակցականները, նոյն իսկ եղբայր ասպանութեան ամենատուր միջոցներու գիմեցին, սակայն Զէյթունցին անվահեր կուրծք տուաւ :

«Շարժում»ի զեկաւարներէն ու մանր, երբեմն Հնչակեան և այժմ ալ Դրօշակեան դաւանանքի հարազատ և ջերմաւոր հաւատացեալներն ըլլալով, և Չարքեանի ակնարկութիւններէն անմասն չմնալով, բնականաբար իրենց հեշտ չպիտի գար տեսնել իրենց պաշտելի կուռքին քայքայումը, և իբր գարաւ վերջիկ յեղափոխական Արալզգնեւ և կամ Սիկէպիալէտներ ճիգեր պիտի թափէին որ օգի և շունչ տալու համար իրենց յիշատիւն : Բաց տակից անտեղ միշտ անխիմներ պիտի սրանէին արատաւորեալ համար բաղմունսոյ անկեղծ հայրենասէր գարծիչի մը արժանիքն ու ժողովրդականութիւնը :

Չարքեանի նկատմամբ տեղի ունեցած անցեալ անյաղաթիւնները իր հակառակորդաց օրինաւոր դաւանը չեղան, անտեղ իրենց հրաբուրդը զայրոյթին մէջ աւելի հրահրուեցան : Չարքեանը պէտք էր սնշտայնել, բարոյապէս մահացնել, տալ ինքերու երկայն շարքին մէջ իր անձնուիրութեամբն ու արժանեզօր վասակած ժողովրդականութիւնն պէտք էր վտանգաւորել : Եւ այս եղաւ Չարքեանի հակառակորդաց կէտ նպատակին :

Չարքեանի անցեալն, գաղափարաբար իր հակառակորդաց նպատակաւոր տոխիմներ չէր հայրկայթէր : «Հարկ ի հնար» զրոյէ զհանճար : Չարքեանի ներկայ յիսթական անձնութիւնը թէեւ տաւ թերեւիք ամբաստանութիւն մը արդարացեալ ըստ զրաւոր ուժ մը չէր, սակայն պարզամիտներու մտքերն առժամակալէ՛ր, դայլով ակզեցնելու դիւրին միջոցը նկատուած էր, և ինչպէ՛ս այս միջոցին չ'իմէին, քանի որ նպատակը միջոցը կ'արդարացնէ և արդէն մտքերու լարուած վիճակին մէջ, Չարքեանի հակառակորդը զայն ապաւելու յաղորդութիւնն ու նետով կը կարծէին կամ կ'երազէին : Ահա՛, այսպէս յերկուեցան երկու հրէշային նամակներ :

«Շարժում» ներկայացուած աւելիքն օգտուելով «Տաւրոս»ի գէմնեցած հակակրօնութիւնն առեւալութեան փոխեց և առանց հիմնական հաստատ փաստերու, դաւաճան, մնացեալ և՛, մակդիրներով ուղղակի Ճգնաւորեանն և անուղղակի կերպիւ Չարքեանն բարոյապէս մահացնելու ջանք : Սակայն իր արտաուրդած երկու նամակներն համոզկեր և պերճափոս փաստեր չէին հաստատելու թէ՛ իրաւամբ Տ. Ճգնաւորեան լլ տեսմ'է և «կատակ» կամ «Տաւրոս» Տաճկ, կտաւարութենէ կաշաւուած մի թերթ, եւ մարդբանակաւորութենէ իրապաւ զուրկ բուրրովն ապուշ մը լինելու է, որ լի թշնամական երկու շինծու նամակներով, տաւանց հաստատուած

իրողութիւններու դատաւիտէտէ կամ
դրովէ զոք :

Թողլով որ մենք Տ. Տ. Չաքրեանի
եւ Ճգնաւորեանի նկատմամբ այդ-
պիսի մի ստոր արարք չենք իսկ
մտածեր , բայց քանի որ հայրութեան
այս ճգնաժամին մէջ եւ այն ալ ար-
տասահմանում տեղի ունեցած այս-
պիսի խնդրական կարեւոր հարց մը
անկողնակալութեամբ եւ ամենա-
նուրբ քննութեամբ մերկացնելն
հանրային օգտին նուիրուած խրմ-
բագրութեան մը պարտքն է , յայտ-
մանհատեան է որ իրողութիւններն
իրը փոստ ներկայանային :

Ո՛հ սուղջ քննադատութիւնը ,
ո՛չ խմբագրի բարոյական—ընկերա-
կան պարտականութիւնը եւ ո՛չ ալ
քաղաքավարութիւնը չէին ներքը ,
որ առանց հիմնական խօսուն փոս-
տերու , ու եւ անհատի մը պատիւն
նսեմանար :

«Շարժում» աւելի ազդու եւ
անաղիւ կիրքերէ քան սուղջ պա-
տուութեամբ ուսանողութեամբ՝ ան-
տեսեց իր ամենատարրական պար-
տականութիւնը , եւ այն թերթը որ
իր մէկ աշխատակցին միջոցաւ ար-
տասահմանեան հայ մասնւոր մեծա-
մասնութիւնը ապականուած կը
նկատէր , իր ձեռքով փորեց իր
անկման փոսը :

(Շարժումակցի) ԼԻՒՆԻ

ԶԸ ՎՀԱՏԻՆՔ

Արեւնայի օրերէ , արհաւիրի ու
աղետալ տեսարաններէ ետք , հայ
ժողովուրդը՝ այսօր կը գտնուի բո-
լորովին տարօրինակ ու քսանքնի
պատկերի մը տուէն . պատկեր մը՝
որ իր ամբողջութեամբը նախանք
կ'ազդէ ամէն տնայ , որ գիտէ զգալ
եւ որ ունի իր մէջ ազգասիրական
եւ տնայ , հայրենասիրական կողով :

Հիմա՝ թշնամին չէ , այլ ժողո-
վուրդը անոր արեւնաթուրմ ճան-
կերէն ազատելու որբազան կոչումն
ունեցող յեղափոխականն է որ ,
զինուած է , լայնածաւալ է ժողովուր-
դին դէմ : Մենք բազմութիւն փոս-
տերով ու փո՛ծերով համագործած
ենք արդէն , մեր յեղափոխական-
ներու մեծ մասին , բացառութիւն
ները , յարգելու պայմանով , ինչ
գոյնի եւ ինչ նկարագրի տէր մար-
դիկ ըլլալնու . եւ հետեւաբար հարկ
չի կայ կրկին անգամ թուել , մեր-
կացնել անոնց շահատակութիւն-
ները , խաբէութիւնները , եղբայ-
րապատկութիւնները . ասոնք մեզ
համար սլ հաստատուած իրողու-
թիւններ են , ասոնց վրայ կասկա-
ծներ ալ չի կայ , դարմանին վրայ
խորհելու ենք . ազգային ներկայ
տագնապալի ու անկերպարան կա-
ցութեան մէջ , ամէն ճշմարիտ հայ ,
ամէն ազնիւ հայրենասէր նուիրա-
կան պարտականութիւն մը ունի ,
ժողովրդի գոյութեան սպառնացող
հրէշտախիլ եւ բարոյապէս անանկա-
ցած այդ յեղափոխականները , աւ-

ել , վնասել յեղափոխութեան կոյս
ու մարդու տաճարէն , եւ ազատել
ժողովուրդը այդ անաղիւ եւ հայ-
կատակ էակներու ստոր շահատա-
կութիւններէն , որոնք դժբաղդա-
բար կը վնասն մեր մէջ , եւ որոնք
օճի պալ գալարումներ կ'ունենան
մեր ձեռքին տակ , մեր շուրջը , ա-
մենէն մութ ու ծածուկ խաւերուն
մէջ իսկ :

Պատմական հաստատուած ճշմար-
տութիւն մ'է որ , ամէն ազգ ու
ժողովուրդ իր դժնդակ օրերուն
մէջ , արտաքին թշնամիին հետ կ'ու-
նենայ եւ իր ներքին թշնամին , սա
անխուսափելի ճակատագիր մ'է ,
աւհա արակ ամէն ստրուկ ժողո-
վուրդի համար , բայց ստիպից ցա-
ւալի իրողութիւն մ'է որ , հայ ժո-
ղովուրդը ներկայ պարագայներու
մէջ ցոյց չը տուաւ այն բարոյական
տոկունութիւնը՝ զոր պէտք էր ընել
այդ ստոր արարքներու հանդէպ
սուիծանալու , խանդավառուելու ,
հայրենիքի ազատման գաղափարով
իր ուղեղը աւելի եւս հրահրելու եւ
այդ սեւ իժերու գլուխները ճզմել ,
շախշախել ջանալու սեղ , թուլ ու
տատամուտ՝ անկիւն մը քաշուած ,
երկաթէ անտարբերութեամբ դի-
տեց այդ կարգ մը մահացուցիչ ա-
ւերումները , եւ չուզեց թեւ տալ
անոնց , որոնք անդուլ կուի կը մը-
ղէին հաստատուելու համար յեղա-
փոխութիւն մը մտքուր , կազմուած՝
ազնիւ , պարկեշտ ու անկեղծ հայ-
րենա-էրենքէ :

Չէ՛ , պէտք չէինք այնչափ շուտ
վհատել , պէտք էր գերիները գտո-
նայինք այն գաղափարին՝ զոր մենք
կը պաշտէինք , եւ ժողովան ողա-
սաւորները այն վեհ գործին՝ ուրկէ
կախուած էր մեր ազգային անկա-
խութիւնը ու ազատութիւնը :

Այն օրը՝ ուր մենք կ'ուխտենք
նուիրուիլ , կատաղի ու յամառ
կուի մղել մեր ներքին ու արտաքին
թշնամիներուն դէմ , այն օրը ար-
դէն ազատուած ենք :

Յիշուէ՛ն մեզ կը գրեն թէ՛ թասե-
րական ներկայացում մը տրուած է ի
նպատակ ԱՐՄԵՆԻԱԻ եւ ՏԱԻՐՈՍԻ , եւ
ներկայացումը կազմակերպողները՝ ե-
ղած են Արմենական եւ վերակազմակ
Հնչակեան պարտներ :

Յիշուէ՛ն ազնիւ հայ ժողովուրդը ի-
րենց համակրական ցոյցի նշանը տուած
են բազմութեամբ լեցունելով թատե-
րասրահն հակառակ Դաշնակցականաց
երգուեալ հակառակորդներու ջանքե-
րուն , եւ գոյացած արդիւնքն եղած է ,
236 ֆրանք , յորմէ վէսէլս խումբը
ազգասիրաբար բարեհաճած է վար դը-
նել 110 ֆր.
Թատրոնի տէրը խղճի մասք 70 »
Հրամանագիր 10 »
Նուագարան 2 ժամ 6 »
Զուտ հասոյթ կէս առ կէս «Ար-
մէնիա»ի եւ «Տաւրոս»ի 40 »

236 »
«Իրաւունք»ի թղթակիցը կէս հեզ-
նական այս լուրը տուաւ եւ «Կոնակի
վրայ բաց թերթ»ի բարոյազուրկ խն-
դագիրները հրէական ծաղրանքով մը

յիշատակեցին . իսկ «Տաւրոս» իրեն
համար եղած այս բարոյական քաջալե-
րութեան եւ խրախուսանքներուն հա-
մար կը գայ մատուցանել հրապարակա-
ւոր ամենախորին շնորհակալութիւնն
Յիշուէ՛ն իր բարի եւ ազնիւ հայրութեան
եւ նիւթականի մասին թող կը տայ որ ,
110 ֆրանքնոց շնորհակալութիւն տայ
վէսէլս խումբը եւ 70 ֆրանքնոց երախ-
տապարտութիւն ալ ցոյց ապ թատրո-
նին տէրը :

Մեզ անձամբ անձանթ կազմակեր-
պիչ յանձնախմբի պատուական բարե-
կամներէն ալ կը խնդրենք որ բարե-
հաճին մեզ ինկած բաժին 20 ֆրանքը՝
հաւասարապէս բաժնէ , յանձնելով 10
ֆրանքը քաթօլիկ «քէօսին» եւ 10
ֆրանքը բողոքական երկանին իրրեւ
վարձք հակաշխատութեան :

Կեցցէ՛ յառաջդիմութիւն , կեցցին
գնահատութիւն եւ հակացողութիւն :

Թաթար բնագործը միւր յարգելի ու
պատուական բարեկամներէն մէկը այդ
թատերահանդէսին ներկայ գտնուած
ու մեզի գրած է , սակայն մենք հա-
մատութիւն համարեցինք անոր ըսած-
ները չը հրատարակել «Տաւրոս»ի մէջ :
անշուշտ մեր յարգելի բարեկամը չի
վշտանար այս գնահատութեան համար :

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՒԻՆՁՈՒ

Դարե՛մ, 14 Ապրիլ 1898.

Ազնիւ խմբագիր,

Հարանական Ընկերութիւնս Դարե-
ժանակ հայոց մտաւորական եւ բարո-
յական զարգացման նպատակաւ նպա-
տակաւ երկու շաբաթ մի անգամ տա-
լիս է հասարակական ձրի դասախօսու-
թիւններ :

Ընկերութեանս վարչութիւնը ներ-
կայ գրութեամբ դիմում է յառաջագի-
մաւէր հայ հեղինակներին , թարգմա-
նիչներին եւ հրատարակիչներին , եւ
խնդրում են որ հաճին քաջալերել եւ
օժանդակել այս բարեկամական ձեռ-
նարկի , նուիրելով իրանց հրատարա-
կութիւններէն մի մի օրինակ , մանա-
ւանդ Գիտական , Առողջապահական ,
Մանկավարժական եւ Պատմական եր-
կեր :

Շնորհակալութեամբ ընդունվում է
նաեւ ազնիւ հայ հասարակութիւնից
նուիրված ու եւ գիրք կամ փող :

Հաճեցէք , Ազնիւ խմբագիր , մեր
այս գրութեան մի անկիւն շնորհիւ Ձեր
պատուական թերթում եւ ընդունել
մեր շնորհակալութիւն :

Նախագահ վարչութեան
ՏՕՔԹ. Կ. Յ. ՓԱՇՏԵԱՆ

Ծեր. Բնկերութեան միակ ապանով հասցէն է,
Salle de Conférence Arménienne
(Perse) Tauris

ԲԱՑ ՆԱՄՍԿ Գ. Գ.ԻՆ

Նիւո-Եօրք

Սիրելի բարեկամ,

Քու նախորդ նամակներէդ մէկովը
տեղեկութիւն ուղեր էիր վառնայի
թերթերուն վրայ : Անցած անգամ կար-
ծեմ բաւական ընդարձակ գրած էի , գոց
նամակի մը մէջ , «Տաւրոս»ի , «Իրա-
ւունք»ի եւ «Պուզակ»ի մասին : Այս
անգամ կարող կուզայ անկարեւորե-
րուն անկարեւորին՝ «Շարժում»ին :

Դէմքդ ապուշ զարմացումով մը ճը-
մութեւն , եւ աչքերուդ մէջ միջա-
վայրին խնդութիւնը երեւակայող մը-

տածում մը դնելու համար , պիտի բաւէ
երբ ամէն բանէ առաջ , երկու բառ ը-
սեմ . — Ե. ը խմբագրապետ . . . :

Սակայն մի՛ գարմանար բարեկամ ,
ընդաքոյս հանճար մը եղաւ հիմա ասիկա ,
անոնցմէ՛ զոր Զօհրապ , տառասխալ մը
վերնագրին տակ պիտի չափչփէր :

Ո՛հ , աս իմաստակները . . . տգեղ
պատկերներու պէս , ինքզինքնին ցու-
ցագրութեան կը դնեն , ժողովրդեան
հետաքրքրութեան արդիւնքը եղող 20
նոցը քաջելու համար : Եւ սակայն ան-
ձէն անցնինք :

Որովհետեւ գիտեմ որ գեղացիդ Ը-
լաւուն համար , պիտի հետաքրքրուիս
Ե. ով , ուստի անոր մէկ վերջի յօդ-
ուածին շուրջը դառնամ : Ամէն բանէ
առաջ գրելու կերպ մը ունի , որ , ի
ծնէ հակակրեւի դէմքի մը պէս , պաղ
է : Երկրորդ , յօդուածը գրած է չորս
սիւնակ , որոնց մէջ , եթէ մէկ գաղա-
փարը կրկնուած չըլլայ երեք չորս ան-
գամ խեղճ «Շարժում» , ենթադրելով
որ Պ. Փ. Արշալիրի մտային երաշխու-
թեան ալ հանդիպեցաւ , առանց նիւթի
պիտի մնայ : Օրինակի համար — սխալ
ըմբռնում մը — ին մէջ , ուր գրողը՝
երկար բարակ բառեր պլորելէն ետքն
է միայն որ իր միտքը բացատրելու
կ'ելլայ . «Հիմա բացատրենք թէ ի՞նչ
ըսել կ'ուզենք . . . » : Յօդուածը շատ
ծիծաղելի է . արդիւնք անհասկացողու-
թեան ա՛յն խօսքերուն , զոր Զօհրա-
նեան գրած է իրենց : «Լ'Առաջին»ի հե-
ղինակը բացարձակապէս չէ ըսած թէ ,
որովհետեւ Արփիար գրագէտ մըն է ,
ուստի պէտք չէ անոր ըրած զրպար-
տութեանց պատասխանել . միայն դի-
տել տուած է թէ , ինչպէս կը հասկըց-
ուի , չը զիջանի «Շարժում»ի խմբա-
գրութեան պէս մտաւորական անկա-
րեւոր մակարդակով խմբագրութեան մը
աչքին՝ փորձ մը իսկ ընել արդարացը-
նելու ա՛յն տեսակ գրագէտներ , որոնց
անունին հանդէպ , իրենց պէս պարկ
ու հեղուկ ուղեգրներուն միայն հիանալ
կը մնար : Խնդիրը ընդհանրացուցած
են , ահաւասիկ սխալը . Զօհրանեան ա-
տիկա միայն իրենց համար ըսած է , եւ
չա՛տ իրաւամբ : Յետոյ յօդուածը պէտք
է դուն իսկ կարդաս , բարեկամս , ինք-
նիրենդ մտադուր համար , ի՛նչ պատա-
կերպ յղացումի :

Մոտ սիւնակներուն մէջ , տեղ մըն
ալ Արփիարին ամբողջ գրածները Պ.
Հրանդի վրայ , կ'ընդունի իրը . «քստ-
մնեցնող ամբաստանութիւններ , արիւ-
նառուշտ ամբաստանութիւններ» ան-
շուշտ այս վերջինին պատասխաններէն
միայն դատելով . ահաւասիկ խմբագրա-
պետ մը , որ , առանց պատուոյ ատեանի
մը մէջ անձնական մերկացումներու ,
թեր ու դէմ յօդուածներէն , որոնց եր-
կութիւն մէջ ալ ստուտը կրնայ զրտ-
նուիլ , եզրակացութեան մը յանգելու
կը յանդգնի : Ժողովուրդին կը մնայ այս
կէտը ուղադրութեան առնել : Եւ յետոյ ,
մինչեւ հիմա ձեզի զրկած թերթերուս
մէջ , արդեօք քանի՞ քանի՞ անգամ
հանդիպեցար սա մաշած ու սխալ նա-
խագասութեան . «Պ. Արփիար յեղափո-
խական քոյր կուսակցութիւն մը քա-
ջայելու միամիտ փորձութիւններու մէջ
կը գլորի» : Ասի՛ք աւելի ստուտ , սակէ
աւելի անխորհուրդ իմաստ մը կրնա՞ս
երեւակայել : Փոխանակ պաշտնապէս
կարենալ հերքելու փաստերու յենած
քննադատութիւններ , որոնք երեւցան
Արփիարեան կուսակցութեան օճկանին
մէջ , ելլալ այդ խօսքը ըսել , ցնդած
մամիկներուն ցնդած , կանխադատ բա-
ռեր որոճալը կը նմանի :

Եւ սակայն այդ յօդուածը կարդալու
ես դուն ինքդ , համոզուելու համար
թէ՛ հո՛ն ո՛րչափ հաւատարմութեամբ է
գրողը Հրանդի անմեղութեամբը , ա՛յն-
չափ որչափ կարծեմ , ինքն իսկ Պ.

